

Առողիտորական ծառայությունն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ

Սիվիլիքառ հիմնադրամը անցկացնում է առողիտորական ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝/այսուհետ՝ Մրցույթ/՝ համաձայն հիմնադրամի կանոնադրության 6.11.15 կետի:

Մրցույթի հայտերն ընդունվում են Սիվիլիքառ հիմնադրամ, Բ.Երևան, Հյուսիսային պողոտա 1, գրասենյակ 30 հասցեում, սկսած 2024թ. ապրիլի 25-ից մինչև 2024թ. մայիսի 2-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 11.00-15.00:

Առողիտորները մրցութային առաջարկությունները պետք է ներկայացնեն 2 /երկու/ փաթեթով՝ սուսնոված, կնքված և ստորագրված ծրարով:

Առաջին փաթեթում ներկայացվում են առողիտորական ծառայության տեխնիկական, երկրորդում՝ ֆինանսական կողմերին վերաբերող առաջարկությունները:

Մրցութային առաջարկների գնահատման ֆինանսական չափանիշը առողիտորական ծառայության արժեքն է ՀՀ դրամով /բոլոր կիրառելի հարկերը և այլ ծախսերը ներառյալ/, իսկ տեխնիկական չափանիշները հետևյալն են՝

- առողիտորի ՀՀ-ում հանաչվածության աստիճանը (հեղինակությունը) և միջազգային հանաչումը (հեղինակությունը)
- առողիտորի աշխատանքային փորձը
- առողիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակը
- առողիտորական ստուգման իրականացման մեթոդները
- առողիտի անցկացման և առողիտորական եզրակացության ներկայացման ժամկետները

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հաճախ իրենց ընկերության կանոնադրությունը, առողիտորական գործունեություն իրականացնելու թույլտվությունը:

Առողիտի ընդգրկման բնագավառներն են՝ հիմնադրամի հաշվապահական հաշվեկշիռը, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Առողիտի իրականացման և առողիտորական եզրակացության ներկայացման ժամկետը 40 օրացուցային օր է՝ հաշվված առողիտը սկսելու օրվանից:

Առողիտը պետք է իրականացվի ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված Առողիտի ստանդարտներին, հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից հրատարակված առողիտի միջազգային ստանդարտներին համապատասխան:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն մինչև 2024թ. մայիսի 8-ը: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կգնահատի և կամփոփի առողիտորական կազմակերպությունների առաջարկությունները: Խորհրդի կողմից մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո և մրցութային հաղթողին հանաչելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում խորհրդի համապատասխան որոշման ընդունման պահից: Որոշման ընդունման օրվանից մեկ շաբաթվա ընթացքում Հիմնադրամը և մրցույթի հաղթող հանաչված մասնակիցը կնքում են առողիտի ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր: